ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 135-Ա

«04» ԱՊՐԻԼԻ 2024Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵԴԵԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՎԱՉԱԳԱՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 2-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի Ջեդեայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 48-րդ կետի 20-րդ ենթակետը, 49-րդ կետը, մարզպետի խորհրդական Վ. Աբրահամյանի 29.03.2024թ. զեկուցագիրը և արձանագրելով, որ ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի մարտի 29-ի թիվ 01/15/22387-2024 գրության հիման վրա Վ. Խաչատուրյանի կողմից սահմանված ժամկետում գրավոր բացատրություն չի ներկայացվել՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու՝ «ՀՀ հիմնական, ավագ, միջնակարգ հանրակրթական դպրոցներում, վարժարաններում, կրթահամալիրներում և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների նախազորակոչային պատրաստության կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կրթության և գիտության նախարարի և ՀՀ պաշտպանության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 1222-Ն համատեղ հրամանով հաստատված կանոնադրության 21-րդ կետի պահանջը և դրա հետ կապված լիազորված մարմնի՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը չապահովելու համար

«ՀՀ Վայոց ձորի մարզի Զեղեայի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Վաչագան Խաչատուրյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վ. Խաչատուրյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք. Եղեգնաձոր